

---

---

## II

### ՓԱՐԻՉԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԱՑՈՒՑԱԿԻ ՖՐԵԴԵՐԻԿ ՄԱԿԼԵՐԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ

#### ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

1908-ին Փարիզի ազգային հրատարակչությունը լույս աշխարհ բերեց հայագիտության համար հույժ կարևոր աշխատություն, որը ներկայացնում էր Փարիզի Ազգային գրադարանում պահվող հայկական ձեռագրերի ցուցակը<sup>1</sup>: Ձեռագրացուցակի կազմողը և առաջաբանի հեղինակը ֆրանսիացի արդեն անվանի հայագետ Ֆ. Մակլերն է, որը եռանդուն շրջել է Եվրոպայի բոլոր այն գրադարանները, որոնցում կարող էին լինել հայկական ձեռագրեր: Իր առաջաբանը Ֆրեդերիկ Մակլերը խորագրել է «Հայկական ֆոնդեր» («Fonds Arménien»): Նա հայտնում է, որ Փարիզի Ազգային գրադարանի հայկական ֆոնդը սկիզբ է առնում XVI դարից: Այդ ֆոնդի ձեռագրերից մեկը նորից կազմվել է՝ կազմի վրա ունենալով Հենրի Երկրորդի զինանշանները<sup>2</sup>: Մի քանի ձեռագրեր Ազգային գրադարան են մտել Լյուդովիկոս XIV օրերին, սակայն այդ ֆոնդի հիմնական հարստացումը կատարվել է Լյուդովիկոս XV թագավորության առաջին տարիներին, և 1728–1730 թթ. այն իրականացրել է Արքայական գրադարանի ձեռագրական բաժնի պահպանողներից արքա Ֆրանսուա Սևինը:

1679 թ. երրորդ անգամ մեկնելով Արևելք՝ արևելագետ Գալլանը<sup>3</sup> առաջադրանք է ստանում ձեռք բերել հայկական այն բոլոր ձեռագրերը, որոնք հնարավոր է գտնել և հատկապես Մովսեսի անունով մի հավաստի պատմություն գրաբարով, հայերեն Աստվածաշնչի ձեռագիր ավելի վաղ օրինակներ, քան այն Հոլանդիայում կհրատարակվեր հայերենով: Խոսքն այստեղ, հավանաբար, 1666–1668 թթ. լույս տեսած Ոսկան Երևանցու տպագրած Աստվածաշնչի մասին է, որի տիտղոսաթերթին գրված է. «Աստվածաշունչ Հնոց եւ Նորոց կտակարանաց (ներ) պարունակօղ շարակարգութեամբ նախնեացն մերոց եւ ճշմարտասիրաց թարգմանչաց: Բսկ զկնի հրամանաւ վեհափառին Տեառն Յակօբայ Հայոց կաթողիկոսի զխակարգեալ և տնատեալ ըստ Դադմատացոյն. նան զհամաձայնու-

---

<sup>1</sup> Catalogue des manuscrits Arméniens et Géorgiens de la Bibliothèque Nationale par Frédéric Macler, Paris, 1908.

<sup>2</sup> Հենրի Երկրորդը սրբացվել է քրիստոնեական եկեղեցու կողմից 1146-ին (տե՛ս Petit Robert – 2, Paris, 1988, p. 826):

<sup>3</sup> Անտուան Գալլան – ֆրանսիացի արևելագետ (1646–1715 թթ.): Մովորել է արաբերեն, թուրքերեն և պարսկերեն: 1670–1675 թթ. ընթացքում մի քանի անգամ այցելել է Կ. Պոլիս: Նրան կոչել են նաև արաբերենի պրոֆեսոր: Տպագրել է իր ճամփորդական նոթերը (1672–1680), «Մուլթան Օսմանի մահվան պատմությունը» (1676), Արևելյան երևելի խոսքեր, օգտակար բառեր ու ասույթներ», «Մուրճի ծագումը և տարածումը» (1699), 12 հատորներով հրատարակել է «Ղուրանը և Հազար ու մի գիշերները» գիրքը (1704–1717 թթ.):

թին հանուրց գրոց Աստուածաշնչից ընդ իրեարս ատրնթեր կարգեալ ամենեցուն. նուաստի ումենն բանի Տեառն սպասաւորի Ոսկանի Երևանցոյ: Յամստերդամ (ներ) տպարանում սրբոյն Էջմիածնի և սրբոյն Մարգսի զօրավարի ի թուում Փրկչին. 1666. Իսկ Հայոց ՌՃԺԵ ամսեանն մարտի մետասանի»<sup>4</sup>:

1720-ին մարկիզ Բոնակը Կոստանդնուպոլսից արքա Բրինյունին էր ուղարկել հայերեն երկու ձեռագրեր, որոնց կցել էր հետաքրքիր բովանդակություն ունեցող մի նամակ: Պարզվում է, որ այդ ձեռագրերը նա ստացել է Կ. Պոլսի հայկական եկեղեցու պատրիարքից, որին խնդրել էր իրեն հանձնել եկեղեցու պաշտամունքային բովանդակությամբ երկու ձեռագրեր, որոնք պատրիարքը նրան հանձնել էր օրինական ձևով, հաստատել իր ստորագրությամբ, կնքել - հաստատել դեսպանատան կողմից<sup>5</sup>: Սակայն նա բավարարված չէ այդ ձեռքբերումներով, որովհետև քաջատեղյակ է Էջմիածնի ու Երուսաղեմի ձեռագրական հարստության մասին ու հույս ունի հենց այդ մատենադարաններում գտնել սուրբ Բարսեղի խորհրդամատուցը<sup>6</sup>:

Փարիզի Ազգային գրադարանի ձեռագրացուցակի առաջաբանից ևս պարզ է դառնում ոսկեդարի հայ թարգմանական դպրոցի կարևորությունը: Բարսեղ Կեսարացու գրած եկեղեցական «առանձին կանոնների հայերեն թարգմանության արժեքն առավել ևս բարձրանում է նրանով, որ չեն պահպանվել դրանց հունարենները (հոդված ԺԴ, Խ-Ծ)»<sup>7</sup>: Ըստ Բարսեղ Կեսարացու գրական ու կրոնական ժառանգության գիտակ Կ. Մուրադյանի բերած մեջբերման, Բարսեղ Կեսարացու գործերը հայերենի են վերածվել հենց հինգերորդ դարում. «Ս. Բարսեղի գրությունները հայերեն թարգմանությամբ» խորագրի տակ Տեր-Պողոսյանը նախ ակնարկում է Կեսարացու մի քանի գործերի հայերեն թարգմանության ժամանակի մասին և ապա ըստ հրատարակված ձեռագրացուցակների տալիս դրանց ցանկը: Ըստ հոդվածագրի, V դարի թարգմանությունն են՝ «Խորհրդամատուցը, Վեցօրեայքը, Ճառ ի հրաւիրեալս ի Մկրտութիւն, մյուսները կրտսերագույն ժամանակե են»<sup>8</sup>:

1728 թ. օգոստոսի 28-ին արքաներ Սեինը և Ֆուլմոն որոշում են փոխել Արքայական գրադարանը հայկական ձեռագրերով հարստացնելու ծրագիրը և Կոստանդնուպոլսից Փարիզ՝ նախարար Մոռեպային են ուղարկում գործնական մի նամակ՝ որոշակի առաջարկներով: Նրանց հայտնի է դառնում, որ մի մասնավոր տան պահոցում կան հայկական 160 ձեռագրեր, որոնք իրենց թվով ավելի շատ են, քան եվրոպական բոլոր գրադարաններում եղածները միասին վերցրած, նույնիսկ ավելի շատ են, քան Կոստանդնուպոլսում եղածները: Այդ ձեռագրերի մեջ կան Սուրբ Գրքի մեկնություններ, Հարանց գործերի թարգմանություններ, աստվածաբանական հին գործեր ու պատմություններ: Սակայն

<sup>4</sup> Հայ գիրքը 1512–1800 թվականներին, Հայ հնատիպ գրքի մատենագիտություն, առաջաբանը՝ Ն. Ա. Ոսկանյանի, խմբագրությամբ՝ Ռ. Ա. Իշխանյանի, Երևան, 1988, էջ 45:

<sup>5</sup> Catalogue des manuscrits Arméniens et Géorgiens ... , p. VI.

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Կ. Մ. Մ ո լ ո ս ո ղ յ ա ն. Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976, էջ 21:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 23:

այդ ձեռագրերի տերը հրաժարվում է դրանք տալ 500 ֆրանկից պակաս գումարով: Բացի այդ, խոստանում են տալ նաև Եվսեբիոսի Պաղեստինի նահատակների պատմությունը, որը ձեռքի տակ չկա նաև հունարենով. այդ ձեռագիրը լույս կսփռի քրիստոնեական եկեղեցու առաջին երեք դարերի պատմության վրա: Նրանք համոզված են, որ մի լեզվով այդքան մեծ թվով ձեռագրերի ձեռքբերումը շատ կարևոր է, և չպետք է հապաղել գործը գլուխ բերելու համար: Եվ եթե այդ բանը կատարվի, պարոն դեսպանը խոստացել է վճարել անհրաժեշտ գումարը: Մի քանի ամիս անց՝ 1729-ի ապրիլի 2-ին, Սևինը մեկ այլ նամակում Մոռեպային պատմում է իր որոնումների շարունակության մասին: Նա գրում է, թե իր գտած 180 հայկական ձեռագրերը պատկանում են մի շատ հարուստ հայ ոսկերչի, որն իր կյանքի մի մասն անց է կացրել դրանք հավաքելով: Այդ մարդն ասում է, թե իր զրքերն արժեն բազմաթիվ քսակներ: Այնպես որ դրանք ձեռք բերելու համար շատ դրամ անհրաժեշտ կլինի ծախսել, եթե այդ հայր համաձայնվի ի վերջո վաճառել: Վաճառականն ասում է, թե 180 ձեռագրերից բացի ինքն ունի ևս 70-ը, որոնք պահել է անձնական օգտագործման համար: Եվ եթե դրանք նույնպես վաճառի, ապա ամեն մի ձեռագիրը կարժենա 20 դահեկան, ուրեմն 250 ձեռագիրն արժենալու է 15.000 ֆրանկ: Պարոն Ֆոնսեկան կարևոր է համարում նախքան ձեռագրերի գնումն իրականացնելը նախապես դրանց ցուցակը կազմելը: Այդ հարցում կարող է օգնություն ցուցաբերել Հակոբ անունով մեկը, որը սովորել է Լյուդովիկոս Մեծի քոլեջում և վարժ է հայերենի ու ֆրանսերենի մեջ: Այդ զգուշությունը կարևոր է: Լևանտի երկրների մարդիկ երբեմն սաստիկ խաբեբաներ են և կարող են կարևոր ձեռագրերի փոխարեն տալ միջակ արժեք ունեցողներ: Նա տեղեկացնում է, որ հայերեն ձեռագրերը ծայրահեղորեն հազվագյուտ են Եվրոպայում, ու հայտնի է, որ այդ հնամենի լեզուն իր մեջ ունի մեծ հարստություն: Մի անձ, որը խորագիտակ է հայերենի մեջ, պնդում է, թե այդ ձեռագրերն ունեն 1.500 հավելվածներ, ու այդ գործերն ընդգրկում են մատենագրության բոլոր բնագավառները՝ տիեզերագիտություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, աստվածաբանություն, պատմագրություն և այլն: Նամակի հեղինակը հիշեցնում է, որ ինքն ի գործու չէ այդ իմանալ, սակայն համոզված է, որ ձեռագրերի ձեռք բերումը շահեկան կլինի գիտության համար:

Սակայն հայ ոսկերչի հետ բանակցությունները ցանկալի էլք չեն ունենում, և Սևինը Կոստանդնուպոլսից 1729-ի ապրիլի 16-ին Մոռեպային հասցեագրած նամակում հայտնում է, թե ինքն անձամբ այցելել է հայ ոսկերչին, գննել ձեռագրերն ու ասել, թե պատրաստ է վերցնել դրանց մի մասը միայն: Ոսկերչին իր սահմանած գինը՝ 15.000 ֆրանկ, չի իջեցրել: Ինքը դժվարությամբ ոսկերչից ստացել է նրա ձեռագրերի ցուցակը, որը հանձնել է հայր Օլդերմանին՝ վերջինս էլ ձեռագրացուցակը թարգմանել է տվել Պողոս անունով մեկին, որը սովորել է Լյուդովիկոս Մեծի քոլեջում: Այդ երիտասարդը, որը փայլուն գիտի հայերենը, վարժ է նաև թուրքերենի, լատիներենի ու ֆրանսերենի մեջ: Այդ ձեռագրերի մեջ կան նաև այնպիսիները, որոնք շատ օգտակար կլինեն միսիոներների համար, բացի այդ, նման ձեռագրերից թե՛ գրականությունը և թե՛ կրոնը մեծ օգուտ կբաղեն:

Մի քանի ամիս անց՝ 1729-ի սեպտեմբերի 4-ին, Սևինը հաղորդում է կոմս Գայլուսին իր ձեռք բերած գրքերի մասին, այն է՝ 40 հատոր ձեռագիր գրքեր և գրեթե նույնքան տպագիր: Ձեռք բերված ձեռագրերի մեջ առանձնանում է մեկը՝ իր սաստիկ մեծ չափերով, որը մի ուժեղ տղամարդ հազիվ բարձրացնի: Այն պարունակում է Հայաստանի պատմությունը, հայոց եկեղեցական ժողովների ժողովածուն և հայ եկեղեցու հին հայրերի բազմաթիվ գործեր: Նա հայտնում է նաև, թե ըստ իր տեղեկությունների այդպիսի ժողովածուներ ողջ Արևելքում կան չորսը, և դրանցից երկուսը հաստատ ինքը ձեռք է բերել: Այդպիսի հայտնագործություններ կատարելով Կոստանդնուպոլսում՝ Սևինը ընդլայնում է իր հետազոտությունների դաշտը ողջ Հայաստանով մեկ: Նա երեք եզակի ձեռագրեր է բերել տալիս մոտ հազար տարվա հնությանը, որոնք պարունակում էին ազգի ճարտար հոգևորականների երկերը, այդպիսիք դեռևս եվրոպական որևէ գրադարանում չկան: Սևինը այդ ձեռագրերը ցույց է տվել բազում հայերի, որոնք չեն կարողացել կարդալ ու հասկանալ:

1729-ի սեպտեմբերի 18-ին գրած նամակում էլ Սևինը Մոռեպային պատմում է իր որոնումների մասին: Նա մեկնել է Կեսարիա, սակայն այդ ճամփորդությունը չի եղել շատ արդյունավետ: Իր ձեռք բերած ձեռագրերից մեկը հունական է, երեքը՝ հայկական: Հունականը միջակ կարգի է, իսկ հայկականների մեջ կա մեկը, որ կոչվում է «Ճառընտիր»: Այդ ձեռագիրն ունի ապշեցուցիչ մեծություն և պարունակում է հայ թագավորների ու կաթողիկոսների պատմությունը, մի մեծ քանակություն եկեղեցական ժողովների ու նրանց վճիռների և բազմաթիվ գործեր հայ եկեղեցու վարդապետների գրչին պատկանող: Մի տեղում այդքան կարևոր նյութերի հավաքված լինելը ձեռագրին հաղորդում է բացառիկ հետաքրքրություն: Այդ «Ճառընտիրը» մի քանի պակաս էջ ունի սկզբից, սակայն ցավն առանց բուժման չի լինում, այն կարելի է վերականգնել այլ «Ճառընտիրով», որ պետք է ուղարկի Ղրիմի հյուպատոսը:

Ի դեպ, 1729-ի ապրիլի 16-ին Սևինը Մոռեպային է հղել մեկ այլ շատ հետաքրքիր նամակ Կոստանդնուպոլսից: Նրանում վերստին խոսվում է Սևինի մտահոգության հիմնական առարկայի մասին՝ որոնել, գտնել, գնել ու Փարիզի Արքայական գրադարան ուղարկել հայկական արժեքավոր ձեռագրեր: «Ես պատվիրել եմ հատկապես հայերեն գրքեր: Դրանցից կան Ղրիմում և որքան որ հասկանում եմ, դրանք կարելի է ավելի հարմար գնով ձեռք բերել, քան Կոստանդնուպոլսում»<sup>9</sup>: Նա նաև հայտնում է, թե արդեն ստացել է մի ծանրոց՝ մեջը 29 հունարեն և 2 հայերեն գրքեր: Հունարեն բոլոր գրքերը եղել են հոգևոր բնույթի, մինչդեռ հայերենները շատ կարևոր են՝ ըստ նամակագրի:

Ֆ. Մակլերն արդյունավետ է համարում Սևինի ուղևորությունը Կոստանդնուպոլիս: Դրա արդյունքն է եղել Փարիզ ուղարկված գրեթե չորս հարյուր արևելյան ձեռագրեր՝ արաբերեն, պարսկերեն, թուրքերեն և հայերեն: Նա տեղյակ է պահում, որ 1735-ին արդեն արքա Գիյոմ դը Վիլեֆրոյը Փարիզի Արքայական գրադարանի առաջին հայկական ձեռագրացուցակում գրանցել էր 128 հայկական ձեռագրեր:

<sup>9</sup> Catalogue des manuscrits Arméniens et Géorgiens..., p. XIV.

Խիստ արժեքավոր են Ֆ. Մակլերի առաջաբանի տողատակային ծանոթագրությունները, որոնցում հայագետը կարևոր փաստեր է հայտնում իր կողմից նշված անձնանունների մասին: Այսպես, օրինակ, իմանում ենք, որ արքա դր Վիլեֆրոյը երկար ու անշահախնդիր աշխատել է հայերեն ձեռագրերի վրա: Ծնվել է Փարիզում 1690-ի մարտի 5-ին. նա կազմել է Սևինի ձեռք բերած հայերեն գրչագիր մատյանների ձեռագրացուցակը: Նա միակն էր, որ գիտեր հայերեն: 1752-ին եղել է Collège de France- ի պրոֆեսոր: Վախճանվել է Փարիզում 1777 ապրիլի 4-ին: Իսկ հայկական ձեռագրերը Փարիզ են ուղարկվել Սևինի ջանքերով և տեղ են հասել 1735-ին: 4 տարի անց արդեն Փարիզի հայերեն ձեռագրերի թիվը հասնում է 138-ի:

Հայերեն ձեռագրեր հավաքելու խնդրում իր դերն է ունեցել նաև մարկիզ Վիլենյուվը, որը 1734-ին Սոռեպային գրում է, թե հայթայթել է 3 հայ երեւն ու 4 ասորերեն ձեռագրեր: Երբ Սևինը վերադառնում է Փարիզ, նրա առաքելությունը շարունակում է արքա Բինյոնը: 1734-ի մայիսի 14-ին նա երաշխավորում է դեսպան մարկիզ Վիլենյուվին Օթթեր անունով նոր մարդու, որը գտնվում էր Կոստանդնուպոլսում հայերեն սովորելու համար, որպեսզի վերջինս շարունակի Սևինի գործը:

Լյուդովիկոս XV ժամանակ հայերեն ձեռագրերի ձեռքբերման խնդրում մեծ դեր է խաղում Վենետիկի Մխիթարյան միաբանությունը: Դրա խոսուն ապացույցը Բինյոնի նամակն է՝ ուղղված Վենետիկի դեսպան կոմս Ֆրուլային, որում հայտնվում է, թե ֆրանսիական Արքայական գրադարանը հպարտ է, քանի որ ունի Եվրոպայի հայերեն ձեռագրերի ամենահարուստ հավաքածուն: Այս հատվածում Ֆ. Մակլերը փաստեր է հաղորդում Վենետիկի սուրբ Ղազար կղզում գտնվող Մխիթարյան միաբանության մասին, որը Վենետիկի հանրապետության սենատի որոշմամբ 1717-ի սեպտեմբերի 8-ին է հաստատվել այնտեղ: Նա հայտնում է նաև, որ Մխիթարյան հայրերը գնել են կղզին ավստրիական կառավարությունից 1733- ին<sup>10</sup>:

Բինյոնը նամակում հատուկ շեշտում է Վիլեֆրոյի կատարած դերը հայ ձեռագրերը նկարագրելու խնդրում ու ավելացնում, թե նրան մեծապես օգնել է Մխիթարյան հայրերից Խաչատուրը, որի մասին տողատակում հայտնում է, որ նա ծնվել է 1708-ին Կոստանդնուպոլսում, վախճանվել է 1780-ին Վենետիկում. հատկապես զբաղվել է հայ ժողովրդի պատմության ու հայ վկայաբանության խնդիրներով: Նամակում Բինյոնը ցանկություն է հայտնում Փարիզի Ազգային գրադարանում ունենալ բոլոր այն գրքերը, որոնք հրատարակել են Մխիթարյան հայրերը: Վիլեֆրոյը Մխիթարյան հայրերից խնդրում է թույլտվություն հայերեն որոշ ձեռագրեր արտագրելու համար:

Ֆ. Մակլերը ներկայացնում է այն հայերեն ձեռագրերի ցանկը, որոնք անհրաժեշտ են Արքայական գրադարանի համար: Այդ ցանկալի ձեռագրերն են՝

- 1) մի աշխարհացույց,
- 2) մի Աստվածաշունչ, եթե կարելի է գտնել ամենահինը,

<sup>10</sup> Victor Langlois. Notice sur le couvent arménien de l'Île Saint-Lazare de Venise. Venise, 1905, p. 13.

- 3) մի հայերեն Հոմերոս՝ չափածո, եթե դեռ կա,  
 4) մի Եվսեբիոս, եթե այն ավելի ամբողջական է, քան իրենց ունեցածը,  
 5) Կեսարների մի պատմություն,  
 6) Հայաստանի կանոնների մի գիրք, որը կոչվում է «Կանոնգիրք», լավ պահպանված, որովհետև իրենց ունեցածի գլուխների վերնագրերը ջնջված են,  
 7) Եղիշե, սուրբ Վարդանի ու նրա նահատակ զինակիցների պատմությունը,  
 8) Միխայիլ Ասորի կաթողիկոսի պատմությունը: Իրենք ունեն նրա պատմությունը, որն սկսվում է Ադամից և ավարտվում Ք. ծ. հ. 1195-ին,  
 9) Ղևոնդ պատմիչ,  
 10) Ստեփանոս Տարոնացի, պատմություն Ադամից մինչև Ք. ծ. հ. 105 (sic),  
 11) Արիստակես Լաստիվերցի, որը շարունակել է նախորդ պատմությունը՝ հասցնելով մինչև 1083 թ.,  
 12) Վարդան, պատմություն. Փարիզի գրադարանում կան աստվածաբանական շատ գործեր այդ նշանավոր հեղինակի անունով,  
 13) Սմբատ (հավանաբար Սմբատ Գունդստարլ),  
 14) Ստեփանոս Սյունեցի,  
 15) Մի հայ, կոչված Մաթևոս՝ որդի Հովակիմի, որին ասում են Շրողեր, հայոց քերականության հեղինակ, որը տպագրվել է 1711-ին Ամստերդամում<sup>11</sup>:  
 16) Ֆ. Մակլերը հիշատակում է Մարկավագի պատմությունը, որում կարևոր փաստեր կան առաջին խաչակրաց արշավանքի մասին: Այդ վկայում է Մամվել Անեցին:  
 Բինյոնը իր վերոհիշյալ նամակում հայտնում է իր փափագը՝ նոր գրքեր ձեռք բերել հայ ժողովրդի պատմության վերաբերյալ ու հայտնում, թե իրենք արդեն ունեն ութ հայ պատմիչի գործեր, դրանք են՝  
 1) Մովսես Խորենացի, նրա պատմությունը սկսվում է ջրհեղեղին հետևող ժամանակներից և հասնում նոր թվարկության մոտ 450 թվականը: Տպագրված է Ամստերդամում,  
 2) Ագաթանգեղոս, Սուրբ Գրիգոր Լուսավորչի կյանքը: Տպագրված է Կոստանդնուպոլսում,  
 3) Մեսրոպ, Ներսես Մեծի կյանքը,  
 4) Մաթևոս, Հայաստանի պատմությունը Ք. ծ. հ. 954-ից մինչև 1111 թվականը,  
 5) Միխայիլ Ասորի, Պատմություն՝ սկսած Ադամից մինչև Ք. ծ. հ. 1195 թվականը,  
 6) Մամվել, Նահապետների ազգաբանությունը մինչև Հիսուս Քրիստոս: Նույն երեք որդիներ Մեմի, Քամի և Հաբեթի հիմնած միապետությունները: Հայերի ժամանակագրությունը՝ սկսած Հիսուս Քրիստոսի ծննդից մինչև 1337թ.,<sup>12</sup>  
 7) Թովմա, Պատմություն Լենկթեմուրի,  
 8) Առաքել, Հայաստանի պատմություն, Ք. ծ. հ. 1443-ից մինչև 1667 թ.: Տպագրված է Ամստերդամում:

<sup>11</sup> Գիրքը կոչվում է «Արամեան լեզուին գանձ»:

<sup>12</sup> Խոսքը XII դարի պատմիչ, ժամանակագիր, տոմարագետ Մամվել Անեցու մասին է, որի ժամանակագրությունը հետագայում շարունակել են այլ մատենագիրներ:

Նամակագիրը նշում է նաև, որ Կոստանդնուպոլսում վաճառում են աշխարհի հայկական քարտեզ, որի ձեռքբերումը ծայրահեղ անհրաժեշտ է, որովհետև այդ քարտեզի վրա հայերն իրենց քաղաքներին ու գավառներին տվել են այնպիսի անուններ, որոնք լիովին տարբերվում են ֆրանսիացի աշխարհագրագետների անվանումներից:

Առանձին ցուցակով Ֆ. Մակլերը ներկայացնում է այն ձեռագրերի ցուցակը, որը Մխիթարյան միաբանության հայրերը թույլատրել են պատճենելու Փարիզի Արքայական գրադարանի համար: Դրանք են՝

- 1) Մեկնություն Եսայի մարգարեի, Եփրեմ Մեծի կազմած,
- 2) Սուրբ Ղուկասի Ավետարանի մեկնություն՝ արված վարդապետ Իզնատ-իոսի կողմից,
- 3) Ներսես Լամբրոնացու գիրքը,
- 4) Ներսես IV-ի «Թուղթ ընդհանրականը»,
- 5) Սուրբ Գրիգոր Լուսավորչի ճառերը հավատի մասին,
- 6) Պատմություն Սոկրատի՝ սկսած սուրբ Միլվեստերից,
- 7) Հովհաննես կաթողիկոսի պատմությունը,
- 8) Հայոց եկեղեցու կանոնները,
- 9) Սուրբ Գրիգոր Նազիազանեցու գիրքը հավատի վերաբերյալ, որում նա - հերքում է աղանդավորներին,
- 10) Անհայտ հեղինակի հայոց պատմություն՝ սկսվում է Հայոց արքա Տրդատի գահակալության ժամանակից,
- 11) Զենոբի թարգմանած Տարոնի պատմությունը,
- 12) Մատյան, որում հերքում են Մուհամեդի ուսմունքը ու նրա հետնորդներին,
- 13) Սուրբ Գրիգոր Նարեկացու «Երգ-երգոցի» մեկնությունը:

Ֆ. Մակլերը Վենետիկի միաբանության տրամադրած ցուցակը ստուգելուց հետո նորից անդրադառնում է արևելյան ձեռագրերին: Փարիզի Արքայական գրադարանի հայկական ձեռագրերի հավաքածուն 1742-ի մայիսին հարստանում է 10 նոր ձեռագրերով: Դրանք ուղարկել էր կոմս Գաստելանը՝ Կոստանդնուպոլսի դեսպանը: Այնուհետև 1833-ին և 1834-ին նորից ձեռք են բերվում սկզբում 6, այնուհետև 9 ձեռագրեր:

Ավելի քան 100 տարի անց, երբ արդեն կային Արքայական գրադարանի - հայկական գրչագրերի երկու ձեռագրացուցակները, հայերի կողմից 1867 թվականին պատրաստեցին նոր ձեռագրացուցակ, որը մնաց ձեռագիր վիճակում, նրանում գրանցվեցին 247 ձեռագրեր: Մի քանի տարի անց Էվարիստ Պոյուդոնը իր հերթին հայ գիտնականների օգնությամբ քաղաքեց նոր ձեռագրացուցակ, որը վերստին մնաց անտիպ վիճակում: 1878-ին արքա Շ. Մարտենը պատրաստեց ավելի մանրամասնված ձեռագրացուցակ՝ հաճախ օգտվելով Պարոնյանի կազմածից: Նրա ձեռագրացուցակում նկարագրված են 267 ձեռագրեր:

Տրեդերիկ Մակլերն ասում է, որ իր կազմած ձեռագրացուցակը բոլորովին նոր որակ է, և հեղինակը հենվել է ն' Պարոնյանի փորձի և առավել ևս Վենետիկի Մխիթարյանների օգնության վրա, որոնք այդ բնագավառում մեծ փորձ ունեին:

Առաջաբանի վերջում հեղինակն ավելորդ չի համարում գիտելիքներ հաղորդել ձեռագրացուցակում եղած գրքերի հնագրության ու մանրանկարների վերաբերյալ: Մակլերն իր գիտելիքները քաղել է Հ. Տաշյանի, Ն.Քարամյանի և Ֆրանց Ֆինկի հայ հնագրությանը վերաբերող աշխատություններից<sup>13</sup>:

Բնութագրվում են հայկական հնագրության տեսակները ըստ ժամանակագրության՝ երկաթագիր, բոլորգիր, նոտրգիր: Խոսվում է նաև պատկերագրերի մասին, որոնցով հաճախ սկսվում են բնագրերի առաջին բառերն ու խորագրերը: Դրանք մեծ մասամբ թռչունների և ձկների պատկերներ են: Հետաքրքիր մանրանկարներ կան նաև հայերեն ձեռագրերի լուսանկարներում:

Ֆ. Մակլերը ներկայացնում է այն ձեռագրերի թվերը, որոնք ունեն մանրանկարներ կամ խազագրված են (notation musicale): Մանրանկարներ ունեն թազավորական գրադարանի 77, իսկ խազագրված են 43 ձեռագրեր:

Վերջում հայազետը ներկայացնում է գրաբարյան տառերի փոխադրության ֆրանսերեն ձևերը՝ ո,ր=r, ի=kh և այլն:

Ֆ. Մակլերի կազմած ձեռագրացուցակը գիտական է և իր ժամանակին մեծ ծառայություն է մատուցել հայագիտությանը: 1998-ին Փարիզում լույս է տեսնում Փարիզի Ազգային գրադարանի հայկական գրչագրերի նոր ձեռագրացուցակը, որը կազմել էին Ռայմոնդ Գևորգյանն ու Արմեն Տեր-Ստեփանյանը՝ աջակցությամբ հմուտ ձեռագրագետներ Բերնար Ուտիեի ու Գևորգ Տեր-Վարդանյանի<sup>14</sup>: Այս ձեռագրացուցակը բացվում է համառոտ «Նախաբանով», որի հեղինակն է Ֆրանսիայի Ազգային գրադարանի տնօրեն Ժան-Պիեռ Անգրեմին: Նա հիշատակում է 1908-ին լույս տեսած Ֆ. Մակլերի ձեռագրացուցակը, որն իր կարևոր դերն է կատարել բանասիրության զարգացման գործում և նոր ձեռագրացուցակը, որն առավել հարուստ է ու կատարյալ, լիովին գաղափար է տալիս հայ ժողովրդի անցյալի հարուստ գրականության վերաբերյալ:

Բնչպես վկայում է դոկտոր Հ. Արթինյանը, Ֆ. Մակլերը կազմել է նաև եվրոպական թանգարանների հայկական ձեռագրերի ցուցակները և ապա ավելացնում. «Փափաքելի է, որ իր այդ գործերը ամփոփվին ու հրատարակվին: Դժբախտաբար իր ճոխ մատենադարանը ցրվեցավ կարգ մը անհոգությանց պատճառով, երբ կարելի էր Երևանի Գրքի Տան մեջ ամփոփել լ»<sup>15</sup>:

<sup>13</sup> Catalogue des manuscrits Arméniens et Géorgiens ..., p. XXV.

<sup>14</sup> *St'u* Raymond H. Kévorkian, Armen Ter-Stépanian avec les concours de Bernard Outtier et de Guévorg Ter-Vardanian. Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France, Catalogue. Paris, 1998.

<sup>15</sup> «Էջմիածին», 1974, № 3-4, էջ 77:



---

ПРЕДИСЛОВИЕ ФРЕДЕРИКА МАКЛЕРА К КАТАЛОГУ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ  
ПАРИЖСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ БИБЛИОТЕКИ

*ԱՆԼԻՏԱ ԴՕԼՈՒԽԱՆՅԱՆ*

Р е з ю м е

В 1908 г. был издан первый научный каталог армянских рукописей Парижской национальной библиотеки. Его составил и снабдил ценным предисловием известный арменовед Фредерик Маклер. В предисловии Ф. Маклер описывает пути обогащения армянского фонда библиотеки и какие исторические личности способствовали этому важному делу. Приведены письма, которые красноречиво описывают, с какими трудностями были собраны армянские рукописи времен Людовика XV. В этом важном деле главную роль сыграл аббат Франсуа Севин. Он же заметил, что в армянских рукописях есть ценные переводы трудов древнегреческих авторов, подлинники которых не сохранились, а также очень богатый материал из всех областей средневековой науки, религии, историографии и литературы.

PREFACE TO THE CATALOGUE OF THE ARMENIAN MANUSCRIPTS OF THE  
NATIONAL LIBRARY OF PARIS BY FRÉDÉRIC MACLER

*AELITA DOLUKHANYAN*

S u m m a r y

The Catalogue of the Armenian manuscripts of the National Library was published in Paris, in 1908 which was skillfully compiled by the well-known French Armenologist Frédéric Macler with the most valuable preface attached to it. The history of compiling the Catalogue of the Armenian manuscripts of the library is introduced in the preface by means of cited letters and unique facts and also those individuals who were devoted to that most important undertaking. The most fruitful period of the acquisition of the Armenian manuscripts coincides with the reign of Louis XV and in this regard the role of Abba François Sevin is especially great. The importance of the Armenian translation school of the golden age for international science becomes clear also from the preface to the Catalogue of the above-stated manuscripts of the National Library of Paris.